

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարերի պատասխաններ

XII-դասարան

1. Դեռևս 1912-ին, նախագգալով իր ժողովրդին սպասվող անավոր աղետը, Աշնան երգիչը գրում է.

...Մութ է, ցուրտ է, և բուք, և բորան,
Մեր ուղիներում սարսափ է և մահ,
Արյունոտ ուղի....Երանի նրան,
Ով հայրենական տուն ունի հիմա...

«Հայրենական տան» երազով Տերյանը հակադրվում էր, անլույս, խավար աղետաբեր իրականությանը: «Հայրենական տան» կարոտը Տերյանի քնարերգությունը հարստացնում է հայրենիքի բազմակողմանի կերպարով: «Հայրենիքը» նրա քնարերգության առանցքներից է դառնում 1912-1917թթ ընթացքում:

Հայրենիքի կերպարը ունի պատմահայրենասիրական խոր բացատրություն: 1914-ին Նվարդ Թումանյանին գրած նամակում Տերյանը խոստովանում է. «Վերջիվերջո ես սկսում եմ գալ այն եզրակացության, որ մեր հայրենիքի ցավը մեզ այնպես է մաշում, ջլատում, որ մենք անընդունակ ենք դառնում ուրիշ բան հասկանալու....Դա մի հիվանդագին սեր է, մի անհատթելի մոլորություն, դրա պրիզմայով է բացվում մեր առջև աշխարհը....

Այդպես մեր հայրենիքի ոգին է մեռնում, իսկ մարդիկ կարծում են, թե կարելի է նրան կենդանացնել...»:

«Ես երբեմն մտածում եմ, որ դա ունի իր խորին և վսեմ իմաստը: Չէ՞ որ այդպես, իմ հոգու նման այրվում է և իմ երկիրը, «Իմ Նաիրին», գուցե դրա համար է այրվում իմ հոգին, որովհետև իմ հոգու մեջ «Նաիրյան չքնաղ հոգին է» այրվում: Եվ ես սկսում եմ զգալ ինձ մեկը նրանցից, որոնց վիճակվել է «Նաիրյան» հոգու բարձր տառապանքը կրել իրենց հոգու

մեջ»: Այնքան սպառիչ է նկարագրել Տերյանը հայրենիքի և իր կապը, որ թվում է այլևս անհնար է որևէ բան ավելացնել, թե ինչպես ծնվեց «Երկիր Նաիրի» շարքը՝ «Նաիրյան խոսքերի գանձարանը»:

1914-ին «Հոգևոր Հայաստան» նշանավոր հոդվածում Տերյանը գրում է. «Հայության համար մի ցավոտ ցնորք է դարձել այդ «Հայաստանը», մի ավետյաց երկիր, դյութական մի անուն»:

Ահա այս ցավագին շունչն է տեղ գտել «Երկիր Նաիրի» շարքում՝ սկսվելով փրկության սպասումներից և հասնելով մինչև փրկության հավատը:

Շարքի համար բնաբան է ծառայել Լերմոնտովից քաղված «люблю отчизну по странную любовью» տողը, որը և կանխորոշում է շարքի ողջ գացմունք

ների ուղղությունը: Շարքը ձևավորվել է 1913-ին գրած «Վտարանդի երկրում աղոտ» բանաստեղծությամբ, որի շուրջը հյուսվում է «Երկիր Նաիրի շարքը»:

Ահերով լցված Տերյանը տազնապալից հարցումով երագում է. «Լուսեղ, քեզ եմ երագում...», «Աղոթքի պես» հնչում է «արքայական» լեզուն: Տերյանի հայրենասիրությունը լիովին տարբերվում է իր նախորդների՝ Նալբանդյանի, Պատկանյանի և այլոց հայրենասիրությունից. Նա բերում է նոր որակ՝ ավելի խորքային, ավելի ներհուն՝ ի հակադրություն ազգային-հայրենասիրական ռազմերգերի, ռազմականչերի և ազատության նահատակների մեծարանքների (Պեշիկթաշյան, Պատկանյան):

Նա անգամ բանավիճում է իր նախորդների հետ՝ առաջադրելով իր նոր ըմբռնումը.

Դու հպարտ չես, իմ հայրենիք,
Տրտում ես դու և իմաստուն,
Կիզում է քեզ մի հուր կնիք,
Մի հմայող ու հին խոստում....

Այս և մյուս բանաստեղծություններում արտահայտված տրտմությունը լուրջ հնազանդության և տրտմության սահմաններում չի մնում, այդ Տրտմությունը ծնում է հպարտություն, սեր, գնահատանք:

Տերյանի և ընդհանրապես մեր ազգային բանաստեղծության մարգարիտներից է «Մշուշի միջից...» հրաշքը, որտեղ մշուշի միջից բացվում է դյութական տեսիլը՝ տրտում՝ Նաիրին՝ թախծոտ ու ներող, վեհ ու պարզ աղոթքով, խնդագին զոհաբերումով, վիրավոր ու անպարտ ոգով:

Շարքը բաղկացած է 13 բանաստեղծությունից և բացվում է «Որպես Լաերտի որդին» բանաստեղծությամբ, որտեղ հեղինակն իրեն համեմատում է Հոմերոսի հերոսի՝ Լաերտի որդի Ռոդիսեսի հետ, ով հրաժա

րվում է օտար սիրենների «անուշ նվազներից» և վերադառնում տուն:

Տերյանն էլ վերադառնում է հայրենի տուն՝ «ունկնդիր լինելու նրա հին երգին» և լացելու այդ երգի հետ :

Անցյալի պատկերները, մոր սրբազան դեմքը, հայրենի հողը անհուն կարոտ են ամբարում հեռու հյուսիսում ապրող բանաստեղծի հոգում:

Տերյանը տազնապալից հարցնում է. «Մի՞ թե վերջին պոետն եմ ես» և կանչում է «ցնորք Նաիրուն», բայց «հավատում է դեռ առավոտին», որ գալու է «անցող ուխտավորի» համար, քանի որ «խաչվածին մահ չկա»: Նա անգամ պահանջում է՝ «յոթնապատիկ խաչված Տիրամորը»՝

Վառիր երկունքի գիշերում խավար,
Հրով մկրտված Նաիրյան հոգին.....

Հայրենիքը խեղդվում է արյան մեջ, բայց բանաստեղծը հաստատում է.

Բարբարոսներ շատ կզան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կմնա հավետ...

Կամ՝

Երկնի՛ր , իմ երկիր, հավատով անմար,
Սուրբ է քո ուղին և պսակդ վեհ.....

Հայրենիքի կերպարը նույնանում է Մոր կերպարին, որին ձոնում է իր ամենահուզական բանաստեղծություններից մեկը՝ «Կարծես թե դարձել եմ ես տուն...»։ Մենք տեսնում ենք նկարեն պատկերներ՝ հին իլիկ շարժող մաշված ու բարակ ձեռներ, պարզկա լեզու, գետից բարձրացող մշուշ, մոր ծնկին թեքված որդու գլուխ և՝ «հեքիաթը անվերջ օրորում» է։

Տերյանը բերեց հայրենասիրական նոր որակ, նոր մտածողություն, որտեղ մենք տեսնում ենք խոնարհ ժողովրդին ձուլվելու, նրա էության մեջ «հալվելու ու ծավալվելու» անխարդախ ուխտը։

1934-ին Խանջյանի կարգադրությամբ Եղիշե Չարենցը գրական թանգարանից իր աշխատասենյակ է տեղափոխում Վահան Տերյանի ձեռագրերը, «Իմ կյանքի ամենամեծ խնդությունն է դա՝ հանել մեկ-մեկ այդ ձեռագրերը և նայել...»։

Տերյանը եղել է Չարենցի համար «միֆական անձնավորություն, հանճարեղ պոետ», Չարենցն ունի Տերյանին բնութագրող բանաստեղծական բազմաթիվ ձոններ՝ սկսած Վերադարձի կանչից (1927թ) մինչև իր վախճանը (1937թ.)։

Այդ բնութագրումներից ամենասպառիչը թերևս հետևյալն է. «Սրտաբեկ, տխուր պոետ արևավոր»։

Վահան՝ Տերյան, ինչպես երգեմ հիշատակը քո,

Թող լուռ փովի հիմա իմ դեմ անլույս երեկո։

Սրտիս վրա իջնի թող մութ մի ամպի քուլա,

Քամին բերե թող մահվան բոթ ու անձրևը լա

Եվ թող թափվեն շուրջս աշնան տերևներ դեղին

Եվ զարդարեն, Վահան՝ Տերյան, քո անցած ուղին։

Ու մշուշում տխու՛ր երգով բյուրավոր զանգեր

Թող օրհներգեն թախիծը քո, իմ հեռու ընկեր...

Դու արդեն հեռացել ես, աշխարհում էլ չկաս դու

Ու լռել է երգը քո արդեն հիմա,

Բայց զգում է սիրտս, որ նորից կգաս դու,

Երբ իջնի գիշերը , ու անձրևը լա։

Երբ իջնի գիշերը ու անցած հուշերը,

Անցածի փշերը դառնորեն խոցեն,

Որբ, մենակ կգաս դու և կերգես քո սերը,

Որ վերջին մեր սերն է աշխարհում գուցե։

Որբ, մենակ կգաս դու և նորից քո երգը,

Կվառե սրտում մեր կարոտանք ու սեր,

Անարև սրտում մեր կվառե քո երգը

Երազներ անմար ու ցնորքներ լուսե

Եվ նորից կզգանք, որ մեր սրտին դու մոտ ես,

Մ որմոքող հրի պես մեր հիվանդ արյան,

Որ լուսե երգին քո մեր հոգին կարոտ է,
Օ՛, հեռու ընկեր իմ, օ՛, Վահան Տերյան...

2.« Արյուն է եղել աշխարհում, եղել է եղեռն ու կռիվ:

Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամենի եղած իրար դեմ:

Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կտրած

Արև է երգել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ պատանին»:

Այսպես է բնութագրել Չարենցը իր հանճարեղ նախորդին, որ ապրելով համիդյան անողորմ իրականության մեջ, տեսնելով արյուն ու սպանդ, կարողանում էր «արև ու գարուն» երգել՝ անսիրտ աշխարհին պար

զելով իր անսահման հավատն ու մարդասիրությունը: Այս «արևն ու գարունը» ստեղծագործական որակ են դառնում միայն հոգեկան դրամայի և մաքառման ընթացքում:

Մեծարենցը ծնվել է Բիհկյան գյուղում՝ «կիրճին խորը, ժայռին ծոցը» փոված , և աշխարհը մանուկ հոգու համար եղել է հրաշք հանելուկ, որ կա խարդել է մանկանը վարսաթափ ուռիների կանացի նազանքով, դեպի գետափ վազող եղնիկներով, գեղեցիկ ,անրջային մթնշաղով, ջերմագին արևով: Այս բոլորը բանաստեղծություն են դարձել, երբ նա բաժանվել է դրանցից ու մտել մի ուրիշ, անձանթ աշխարհ, որտեղ ծնվել է «մարմնի վերքը և սրտի վերքը» : Ու իրար են միացել հոգին ու բնությունը, ցավն ու գեղեցկությունը՝ դառնալով հավերժական մեղեդի՝ թախծի մասին: Հոգեկան դրաման չափազանց էական էր Մեծարենցի անձնական կյանքում. 1902-ին թուրք մսագործները ամոթխած ու նրբին պատանուն շփոթում են նրա ազգականներից մեկի հետ և անողորմ ծեծի ենթարկում ու անելիով վիրավորում թևը: Եվ ծայր է առնում հյուժախտը, նաև ներքին մաքառումը կյանքի համար:

Մեծարենցը գրում է իր վշտի երգերի ու վիրավոր երազների մասին՝ դառնալով նաև իր սերնդակիցների երգիչը: 1907-ին լույս է տեսնում «Ծիածանը» , այնուհետև՝ «Նոր տաղերը» , «Ծիածանում» արտացոլվում է տառապող մարդու դրաման, և այստեղ էական բաղադրիչ է դառնում բնությունը: Եվ ամենից առաջ՝ գիշերերգերը. Գիշերվա մեջ ծավալվում է վիշտը, գիշերը դառնում է նաև յուրօրինակ ինքնահանգստացում ու մխիթարություն.

Համբույրիդ, գիշե՛ր, պատուհանս է բաց...

...Ցնորաբեր գիշե՛ր, ա՛հ, ընդունե՛ զիս....

որպեսզի գիշերվա կախարդական գրկում՝ «հաշիշով օծուն ու բալասանով», կարողանա տոնել «հոգվույն կիրակին», «լուսեղեն ճամփեն»՝ անցնելով զինով: Այնուհետև պետք է իր «ծփանուտ երազի ավիունքեն», «Բաղձանքով ակաղձուն» նավակներ մեկնեն և ետդարձի «Անձուկի բոցը» պետք է պաշարի նրան ու դառնա «ըսպասման հիվանդ»՝ խնդրելով «Բարի արևին՝ շողա՛, շողա՛ հիվանդ եմ»: Բայց այս հիվանդը սովորական հիվանդ չէ, այլ «լուսաբաղձ, որ քիչ առ քիչ կը մեռնի՝ կառչած իր խղ հույսերուն»:

Բայց հանճարեղ բնապաշտը կմնար սուկ ցավի բանաստեղծ, եթե չայրվեր ուրիշներին ապրեցնելու, օգնելու սրբազան ցանկությամբ:

Նրա սիրտը թրթռում է «համաշխարհիկ բաբախներով», «Ըլլայի՛, ըլլայի՛» շարքը ասվածի հաստատումն է, որտեղ բանաստեղծը վերանում է կյանքի դառնություններից, սոցիալական չարիքներից, բարոյական աղետներից և երևում է մարդու նկատմամբ ունեցած սիրով ու հումանիզմով առլեցուն հոգի: Նա ստեղծում է ուրույն երգ մարդու մասին՝ մարդերգություն:

«Այլևս եսին տաղտկալի ոչնչաբանություններեն» վերանալ և գծել լույսի, բարության, նվիրումի երանգներ: Այս մարդերգությունը Մեծարենցի աշխարհայացքի առանցքային գիծն է, որի ամենաուժեղ արտահայտութ

յունը «Ըլլայի՛, ըլլայի՛» շարքն է՝ «Իրիկուն», «Հովր», «Հյուղը» բանաստեղծութ յուններով: Բանաստեղծի ցանկությունը մեկն է՝ ամոքել, օգնել և երջանկացնել մարդկանց, ոչ թե անձնագոհությամբ ու ուժեղ կամքի դրվատմամբ, այլ հով ու հյուղ դառնալու իղձով, իրիկուն լինելու և յուրաքանչյուր անցորդի ճակատին հպվելու ցանկությամբ:

Քանի որ բնությունն ինքը ամենամեծ մարդն է, ուստի բանաստեղծը փոխա կերպվում է իրիկվա, հովի կամ հյուղի: Այս քերթվածներում հիշվում են բոլորը՝ «ոգևոր աղջիկը», «ձկնորսները», «ձյունին մեջ սառող մարդը», «անճրագ խուղերը», «անսվաղ մանուկները», «ուշացած անցորդները»:

Կյանքի վերջին ամիսներին Մեծարենցը ստեղծեց ոչ միայն իր , այլև հայ բանաստեղծության ամենաշքեղ հրաշալիքներից մեկը՝ «Տո՛ւր , ինձի,

Տեր» քերթվածը : Հեղինակն այս ստեղծագործությանը տվել է նաև «Արդի մարդուն Հայր մերը» վերնագիրը: Այս երկրորդ վերնագիրը բացահայտում է Մեծարենցի գաղափարական նպատակները: «Հայր մերը» եկեղեցական այն աղոթքն է , որ արտասանվել է Հիսուսի շուրթերով և ամեն օր արտա սանում է մեզնից յուրաքանչյուրը: Սա այն աղոթքն է , որ իր մեջ պարունակում է բոլոր մնացյալները:

Մեծարենցը իր քերթվածները համարում էր նորօրյա աղոթք և իր աղոթք-բանաստեղծության մեջ առաջադրում էր XX դարի մարդու բարոյական դավանանքը՝ անշահախնդիր ու բոլորանվեր մարդասիրություն:

«Տո՛ւր , ինձի, Տե՛ր» տողը կրկնվում է յուրաքանչյուր եռատողի վերջում (15-անգամ). Այս բազմապատիկ կրկնությունը հաստատում է, որ արդի մարդու հավատո հանգանակը պետք է լինի հրաժարումը անձնական երջանկությունից՝ հանուն այլոց երջանկության և սարսափում է այն մտքից , որ ինքը, ի սեր իր անձնական ուրախության ,կարող է մոռանալ ուրիշների վիշտն ու հոգսը:

Տո՛ւր , ինձի , Տե՛ր , ուրախությունն անանձնական,

Ու չըլլա որ ուրիշներու կոծն ու կական

Խեղդել ուզեմ ջրովեժին մեջ դափիս ձայնին:

Եվ այս տողերը գրում է անկողնուն գամված և մոտալուտ մահվան շունչն զգացող մի պատանի, որ , հիրավի, ազնվագույն նկարագրով մի վիթխարի անհատականություն է:

Ռուս գրող Մամուիլ Մարշակը, ծանոթանալով այս քերթվածի տողացի թարգմանությունը, բացականչել է. «Որքա՛ն հարազատ թվաց ինձ այդ «ուրախությունն անանձնականն»...«Ուրախություն անանձնական... հյուղ լինելն սպասել ուղևորի ժամանման... Դա ոչ միայն բանաստեղծական սքանչելիք է, այլև մարդկային ոգու վեհություն, որովհետև շատ տառապած ժողովրդի գավակ է Մեծարենցը: Այ, դա է ողբերգությունը հաղթահարող ոգին...»:

«Երբ մրտում եմ այս աշխարհում , մեծ պատանի՛ գրկում եմ քո երգերը...», գրել է Վահան Թոթովենցը, մենք էլ, երբ չարանում ենք կամ հոգնում, սիրելի՛ , սիրելի՛ Մեծարենց, կարդում ենք Քո աղոթք- բանաստեղծությունը և լցվում սիրով, անսահման սիրով ու բարությանը, «լուսի՛ նավորդ», հանճարե՛ դ պատանի...»

3. Գուրգեն Մահարին՝ հայ գրականության մեծ տառապյալներից մեկը, գրականություն բերեց զուտ մահարիական մի սքանչելի աշխարհ՝ «սիրո և բնության նրբահյուս բանաստեղծություններով, բարդիներով ու հնձաններով, Նիցցայի պարտիզայաններով, իր մանկության ու պատանեկության տխուր-ուրախ պատումներով, և, իհարկե Չալոյի սքանչելի բալլադով» (Ս, Աղաբաբյան): Եվ սերունդներ դարձան այս կախարդական աշխարհի ծնրադիր երկրպագուները, այրվեցին նրա «Մանկության» ուրախ կամ վշտոտ տրամադրությամբ՝ շաղախված մահարիական շքեղաշուք հումորով, նրա հետ կիսեցին պատանեկան սիրո խանդի ու մերժման ծանր ապրումները: Մահարու ծանրակշիռ գրականության մեջ իր ուրույն տեղն ունի ինքնակենսագրական հնգապատումը, որն իր ընդգրկումով դուրս է գալիս անձնականության տիրույթներից՝ դառնալով ժամանակաշրջանի բացահայտման բացառիկ վավերաթուղթ: Մահարին «անմրցելի հուշագրող» է. Նրա բոլոր հուշերում գերիշխողը ինտոնացիան է, դեպքերի մատուցման ձևը, նա զրուցում է հերոսների հետ՝ նրանց էլ դարձնելով դեպքերի մասնակից, զրուցում է հերոսների հետ նրանց մասին:

Իր ամբողջ կյանքում Մահարին կարոտեց իր կորցրած Վանին, Օղիկ տաստի՛ Վանի բարբառով իր Գուրիկին նվիրված պատմություններին, կարոտեց իրենց ընտանիքի խմբանկարին՝ եղբայրներին, սքանչելի Ադրիներին, մորը, սգաց քեռու գնդակին զոհ դարձած հոր վաղաժամ վախճանը՝ «ճրագը հանգավ» :

Կյանքի տարբեր տարիներին նա գրեց «Մանկություն», «Պատանեկութ յուն», «Երիտասարդության սեմին», «Երիտասարդություն», «Ծաղկած փշալարեր» վիպակները, որոնք էլ դարձան նրա հնգապատումը «Մանկություն իմ ոսկեծամ, մանկություն իմ, որ անցար նոր ցանած արտից..», հուզախառով մորմոքում է գրողը իր կորցրած գեղեցիկ մանկության համար. Հիշողության զգրոցներից հանում է դրվագներ և հյուսում մանկության ոսկի հեքիաթը: «Պատանեկությունը» սկսում է մի գիշերում հանկարծ պատանի դարձած տղայի՝ գաղթի ճանապարհներին կրած կորստով ու տառապանքով: Նա հրաժեշտ է տալիս յուրահատուկ բույր ունեցող Վանին, իր երազային Վանին, էգեստարներին, որտեղ խաղացել էր նրա հեքիաթային, ոսկեծամ մանկությունը: Գաղթի ճամփեքին նրանք կորցնում են իրար, տատը գետն է նետվում,

քույրը՝ մահանում, մայրն ու եղբայրները ընկնում են այլ քաղաքներ, իսկ Գուրիկը՝ Գուրգեն Մահարին՝ Իգդիր:

Հետո Էջմիածին. Որբերի հայրիկի՝ Թումանյանի այցը «տխու՛ր, տխու՛ր մի պատկեր»: Հետո՝ Ղարաքիլիսա, Դիլիջան. Որդուն փնտրող մոր նամակը, հետո ընկերներից մեկի մահը, և Մահարին որբերին համեմատում է աղավնիների հետ . «Նրանք ո՛րք են ու տխուր ու վայում են դառնագին»...

«Պատանեկությունը » ավարտվում է Թիֆլիսում՝ մորը և եղբայրներին գտնելու հիշարժան դրվագով: «Երիտասարդության սեմին» գրվում է 25 տարի ուշացումով՝ արքայի տարիներին, Կրասնոյարսկի մարզի Կուռայ գյուղում: Նկարագրվում է Թիֆլիսյան տարիների կյանքը, գրական մարդիկ «Մի բաժակ թեյ» սրճարանում: Թեև գրվել է բավականին ուշացումով, բայց Մահարին պահպանել է նույն պատմելաճճ՝ հումորով, ծաղրով, դառնությամբ, կարոտով:

«Երիտասարդությունը» չգրվեց . գրողը ժամանակ չունեցավ, գրվեց միայն մի գլուխ՝ «Խառն օրեր» դարձյալ 1920-ի մասին:

Իսկ հետո գրվեց «Ծաղկած փշալարեր» տխու՛ր , անչափ տխուր, բայց անելանելի մահացու տխրության մեջ էլ անգամ երգիծանքի կենսաժպիտ լույսով բոցկլտացող հրաշքը, որն իր սեղմ բովանդակությամբ մրցակիցն է Սոլժենիցինի «Գուլագի» (վեց հատոր) Գիրքն արգելվեց սպագրել, քանի որ ընդգրկում էր Մահարու արքայի 10-տարիները՝ ամբողջացնելով 1936-1947 թվականներին ամբաստանված միլիոնավոր մարդկանց գողացված կյանքը: Այն սպագրվեց Բեյրութի «Նաիրի» շաբաթաթերթում 1971-72-ին, այնուհետև 1986-ին առանձին գրքով՝ դարձյալ Բեյրութում, և միայն 1988-ին՝ հայրենիքում: Մահարին չտեսավ իր գրքի շքերթը, բայց նա համոզված էր դրանում, որովհետև գիտեր իր գրքի գորությունը:

Մահարին վերակենդանացնում է իր և իր նման միլիոնավոր անմեղ դատապարտյալների տաժանակիր կյանքը հեռավոր Կոլիմայում, որտեղ 10-ամիս թագավորում է ձյունը: Նա ներկայացնում է Բրուտանոցի կյանքը:

Վիպակի ամբողջ էությունը հալածանքների մեջ անգամ մարդկային արժեքները պահպանելու ուժն է՝ և «հո՛ւմ...հո՛ւմ ...հումանիզմի» միջոցով արդարության հասնելու ձգտումը:

«Հիվանդ արդարության կենացը խմենք, ծանր է նրա դրությունը, բայց նա չի մեռնի... : Երբ հիվանդ է արդարությունը, մարդիկ խեղճանում են, մանրանում, դառնում չար, երկերեսանի քծնող...» :

«Ու երգում են փշալարերը, իսկ նրանց երգը տխուր է ու արյունոտ...» և արքայականները լսում են այդ երգը և փորձում այն վերածել սիրո:

Անգամ փշալարերի ներսում ծաղկում է սերը՝ փրկության միակ ապրեցնող հյուսը, որը թույլ չի տալիս հուսահատվել, արքայալները պահպանում են նաև իրենց հիշողությունը, որն օգնում է ապրելու, «Կեսգիշեր է, բայց աքաղաղներն անգամ գիտեն, որ լուսաբացը հեռու չէ: Իսկ ես մարդ տեղովս հուսահատվել եմ... » և պայքարում է այդ «շեքսպիրյան ողբերգության» դեմ իր հավատով, կատակով, սրամտությամբ:

Վիպակի վերնագիրը հենց ապրելու հավատի ու մաքառման մեկնաբանությունն է,

փշալարերը կծաղկեն, երբ վերջապես հաղթի արդարությունը, և սերը ծաղկի...

Մահարին անուղղելի լավատես էր ու իրապաշտ:

Նա իր «Ինքնակենսագրական» պատմվածքը ավարտում է այսպես. «...Եթե այս րոպեին ներս մտներ ահեղ և ամենակարող տերը, նստեր իմ դիմաց, մի ծխախոտ վառեր և ասեր.«Տալիս եմ քեզ երկրորդ կյանք, գծիր քո երկրորդ կյանքի ուղին օրորոցից մինչև գերեզման, ինչպես որ ցանկանաս, և կկատարվի քո կամքը... Ինչպե՞ս կուզենայիր ապրել: Ես նրան կպատասխանեի առանց վարանելու. –Ճիշտ այնպես, ինչպես ապրեցի»:

Այսպիսին է զարմանալի ու զմայլելի Մահարին, ում Համո Սահյանը ձոնել է հետևյալ տողերը.

Շաղ է տալիս շենք ու շնորհ ու քայլում է հաղթական,

Միտքն անհուսիս, ու ձեռքի մեջ Անմահության բանալին է...

4.Եվ բառերի համար քո մարմարյա, հնամենի , բուրյան,

Որպես մեր հին, քարաքանդակ անդուռ մատուռների

Անջնջելի գրերը հնադարյան

, -Եվ մյուռնի նման սրբազնագույն

Քո երկերի մաքուր սկիհներում պահված՝

Խորհուրդների համար մշտահրմա,

որպես խարհուրդը մեր նախրական ոգու.....

Ես քեզ օրհնում եմ արդ իմ անդարարտ երգով:

Ահա այս «մարմարյա» բառերով մեծ կյորեսեցին քանդակեց մարդկային հոգու

տառապանքը, սերը, տխրությունն ու չմեռնող հավատը, քանդակեց գեղեցկությունը,

որի առջև անգոր էր անգամ հեռավոր լեռներում ապրող, իր օրվա ապրուստը մի կերպ

վաստակող և իր շուրջը միշտ միևնույն պատկերները տեսնող Սաքանը, որի հոգու

խորքերում ծվարած երազը մարմին է առնելու «քաղաքաբնակ կնոջ մերկ ազդր»

տեսնելիս, որ այլևս չի տեսնելու:

Ակսել Բակունցի արձակը մեր գրականության մեջ զբաղեցրեց այն տեղը, որը իր

բառերով ասած . «մի տան պատուհանից ճրագի սպիտակ լույս էր երևում , կարծես այդ

մթին ստվերների մեջ մոլորվել էր մի մանրիկ աստղ», հենց այդ «մանրիկ աստղն» էր,

որ շողաց ու փայլեց ամբողջ լույսով՝ բացելով մեր արձակի բոլորովին նոր մի էջ:

Բակունցը հասավ ճշգրիտ բառի գեղեցկությանը՝ պատմելով կողմնակիի, ոչ էականի,

արձագանքի մասին: Այդպիսինն է «Մթնաձորի չարքը» հրաշալի գործը, որի տողերի

արանքից մեզ է նայում զարմացած ու հիացած Սաքանը, ում քաղաքից եկած

հրահանգիչը «չարք» է թվում՝ անխրական, անըմբռնելի:

«Մթնաձորի չարքը» (գրողի եղբոր վկայությամբ) ունեցել է իրական նախահիմք.

«փողոցում կանգնել էր մի կին, տղամարդու գլխարկով: Կինը պինդ բռնել է ձիու սանձը,

իսկ ձին ոտքով դուփում էր փողոցի թրիքը: Այդ կինը՝ ագիտատոր Աննան, մեր քույր

Աննան էր, որ օր ու գիշեր ձին նստած շրջում էր մի գյուղից մյուսը, կանանց խմբակներ

կազմակերպում՝ սովետական իշխանությանը օգնելու համար»: «Ես կուսակցական մարդ եմ, նանի, ես իմ տերը չեմ, - ասում է Ասյան»: Եվ իրոք դա մեր Աննայի ասածներն էին: Ուրեմն՝ այս իրական կինը Բակունցի բարեկամն է, իսկ կերպարը՝ ժամանակի մեջ ժամանակը փոխել ցանկացող կինն է ընդհանրապես: Հեռավոր լեռնային գյուղ է գնում հրահանգչուհի Ասյան՝ «կնանոց ժողովի համար»:

Առաջինը նրան հանդիպում է Սաքանը, բռնում ձիու սանձը, և երբ կինը «կոշիկների ծայրով հրմշտկեց ձիու կողերին, Սաքանը տեսավ կնոջ բարակ գուլպաների վերի մասը, մի մատ լայնքի ժապավեն՝ գուլպայի վրա, ժապավենից վերև էլ վարդագույն միսը, որ կարծես նույն ժապավենն էր, մի քիչ բաց կարմիր»: Սա առաջին հանդիպումն է Ասյայի հետ, թվում է, ոչինչ չասող, բայց ընթերցողը զգում է, որ շուտով ինչ-որ բան է կատարվելու:

Երբ Մարալը ծնում էր, և հարսը տանը չէր (գնացել էր կնանոց ժողով), Սաքանը հիշեց գյուղ եկած կնոջ գուլպան՝ ծայրին կարմիր երիզ: Սա արդեն երկրորդ մտովի հանդիպումն էր կնոջ հետ:

Երրորդ «Հանդիպումը» Մրոնոնց տան պատուհանից ներս նայելն էր. «Կինը սպիտակ շորով էր, թևերն էլ մինչև արմուները բաց»: Իսկ իր կինը նստել էր գետնին, շալը գլխին. «Այնպես խեղճ-խեղճ նստել էր»:

Այնուհետև կնոջ պատկերը գերում է Սաքանին, «դարմանի քրոցը թարս է շալակում», որովհետև «աչքի առաջին սպիտակ շորերով կինն էր՝ գիրքը ձեռին»:

Հետո այդ «տեսիլքը դոնադ» է Սաքանի տանը: Սաքանը մոտեցավ՝ հյուրին ողջունելու և «նրան թվաց, թե նրա ձեռքը նոր ծնած հորթուկի պես փափուկ էր»:

Հետո Ասյան ծիծաղեց, և Սաքանը տեսավ նրա մաքուր ատամները, մազերի մի փնջի ճակատին ընկնելը, և նա հիշեց ալևորի «չարքի» պատմությունը: «Հաց ուտելիս Սաքանի աչքը Ասյայի փոքրիկ պատամներին էր», իսկ երբ նայեց կնոջը, «Սաքանին այնպես թվաց, թե կինը որոճում է»: Երբ Ասյան պատկում է, և Սաքանը անցնում է նրա անկողնու մոտով, նրան թվում է, թե «մեկը քաղել էր սարի ծաղիկները, սեղմել, հյութը հանել և ջրի պես շաղ տվել քուրսուն», իսկ երբ պառկեց իր տեղաշորում՝ չլվացած վերմակի, հազար անգամ քրտինք ծծած շապկի, անվա մարմնի տհաճ հոտը կար: Քունը կամաց իջավ նրա հոգնած աչքերին և «նրան թվաց, թե օրորվում է ջրի երեսին, ջրի երեսին օրորվում է և մի սպիտակ շոր»: «Իսկ կնոջ բերանից մի ծանր հոտ քթովն ընկավ և նրան թվաց, թե նրա ատամները ժանգոտել ու փտել էին»:

Բացվում է լույսը՝ իր հետ բերելով Սաքանի հոգու խառնաշփոթը. Ասյան Սաքանի կողքին է, հորթին ծաղիկ է տալիս, հետո լվացվում է՝ ատամները սրբելով, և Սաքանի քթում նորից կնոջ բերանի հոտն է: Հետո Ասյան հեռանում է՝ իր հետ տանելով Սաքանի հոգու փոթորիկը:

Երեկոյան, երբ Սաքանը վերադարձավ այգուց, տանն ամեն ինչ նույնն էր, բայց նա մի տեսակ չարացած էր, թոնթորում էր կնոջ վրա, չէր խոսում, իսկ հոգում «չարքի» տեսիլն էր, գլխատակին Ասյայի բարձն էր՝ յուրահատուկ հոտով, և Սաքանին թվաց, թե դա իր կնոջ բույրն է, «իր կնոջ ուսն էլ բաց է, հագին ձյունի պես սպիտակ շալիկ ունի»:

Երագում Սաքանը տեսնում էր, թե ինչպես «սպիտակ շոր հագած մի կին ձորով վազում

Էր իր ետևից, մոտենում էր, որ բռնի, կանգնում էր կինը, ծիծաղելով ետ փախչում ձորն ի վեր»։ Այդպես փախչող կնոջ պես անհասանելի մնաց Սաքանի հոգում արթնացած տազնապը, գեթ մեկ օր Սաքանը տեսնում է անըմբռնելի գեղեցկությունը, նրա հոգում խլրտում է մի նոր հույզ՝ մինչ այդ անձանթը։

Բայց...գնում է Սթենաձորի «չարքը», կյանքը նորից շարունակվում է, և Սաքանի հոգում մնում է մի գեղեցիկ հուշ, մի փախչող տեսիլք, մի ծաղկաբույր գեղեցկություն, որն այլևս երբեք չի տեսնելու։

Այնքա՛ն գեղեցիկ ու նուրբ է նկարագրում Բակունցը Սաքանի «սերը», որ մենք տեսնում ենք, շոշափում նրա հոգում արթնացած խելահեղ զգացումը։ Մենք նորից զգում ենք Բակունցյան երկերի անդիմադրելի հմայքը, նրա բյուրեղյա լեզվի «քարաքանդակ» բառերի երաժշտությունը։

Մենք զգում ենք «ստեղծագործական երևակայության թռիչքը, լեզվի հողեղեն ամբողջությունը և բյուրեղյա մաքրությունը։ Ոչ մի ուրիշ հայ արձակագիր չի հասել այս բարձունքին» (Էդ.Ջրբաշյան)։ Եվ երիցս ճիշտ է Բակունցի հոգեզավակ ու հայրենակից Սահյանը, երբ գրում է.

Դու քանդակեցիր անմահ կոթողներ,
Սրբատաշ տողեր քանդակեցիր դու,
Արևի շողեր, անձրևի քողեր,
Ծիրանի փողեր քանդակեցիր դու :

Արձագանքն էիր դու մեր ձորերի՝
Անտառներն ի վեր փռված սարերին...
Եվ շառայի հետ այս մեծ օրերի
Միրհավի կանչն ես տանում դարերին։

Վահա՛ն Տերյան, ինչպե՞ս երգեմ հիշատակը քո
Թող լուռ փռվի հիմա իմ դեմ անլույս երեկո։
Սրտիս վրա իջնի թող մութ մի ամպի քուլա,
Քամին բերե թող մահվան բոթ, ու անձրևը լա։
Եվ թող թաձվեն շուրջս աշնան տերևներ դեղին
Եվ զարդարեն, Վահան՛ն Տերյան, քո անցած ուղին։
Ու մշուշում տխո՛ւր երգով բյուրավոր զանգեր,
Թող օրհներգեն թախիծը քո, իմ հեռու ընկեր...

Դու արդեն հեռացել ես, աշխարհում էլ չկաս դու
Ու լռել է երգը քո արդեն հիմա,
Բայց զգում է սիրտս, որ նորից կգաս դու,
Երբ իջնի գիշերը, ու անձրևը լա։
Երբ իջնի գիշերը ու անցած հուշերը,

Անցածի փշերը դառնորեն խոցեն,
Որք, մենակ կգաս դու և կերգես քո սերը,
Որ վերջին մեր սերն է աշխարհում գուցե:
Որք, մենակ կգաս դու և նորից քո երգը,
Կվառե սրտում մեր կարոտանք ու սեր,
Անարև սրտում մեր կվառե քո երգը
Երագներ անմար ու ցնորքներ լուսե
Եվ նորից կզգանք, որ մեր սրտին դու մոտ ես,
Մ որմոքող հրի պես մեր հիվանդ արյան,
Որ լուսե երգին քո մեր հոգին կարոտ է,
Օ՛, հեռու ընկեր իմ, օ՛, Վահան Տերյան...

Դու լուսե, անցար ու չկաս, դու թեթև, անմարմին, անծիր:
Դու ուրիշ խնդության երագ:
Դու սրտում մեր ընդմիջտ վառեցիր կրակներ՝ ամուր ու թաքուն:
Փռեցիր լուսավոր գանձեր:
Եվ երբեք, երբեք չի աղոտի քո կանթեղը խավար մեր հոգում,
Քո կանթեղը՝ հեռու կարոտի:

Քո «Մ թնաձորում» թախիժ է ծորում
Ու կարոտ՝ մանկութ հարազատ ձորի,
Աշխատի՛ր, սակայն, որ այդ մութ ձորում
Քո պայծառ ուղին անդարձ չկորի:

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարերի
գնահատման չափանիշներ

XII դասարան

1. 1-ին ենթահարց՝ 1,5 միավոր, 2-րդը՝ 2-միավոր, 3-րդը՝ 1,5 միավոր
2. 1-ին ենթահարց՝ 2մ., 2-րդը՝ 3միավոր
3. 1 -ին ենթահարց՝ 2միավոր, 2-րդը՝ 2-միավոր, , 3-րդը՝ 1 միավոր
4. 1,3,4-րդ ենթահարցերը՝ 1-ական միավոր , 2-րդը՝ 2 միավոր